

ցէք, ապստամբ երկիրն զարկէք, Խոքը Խնամա Սփառա զօքքով գնաց
Զէթրամելսմահ հետ պատերազմ ըրաւ. Որմիզդ ինձ օգնեց. Որմիզդի օգ-
նութեամբ իմ զօքքս կոտրեց ապստամբ զօքքը և Զէթրամելսման բռնելով
իմ առջևս բերին, և անոր ականջներն ու քիթը կոտրեցի և զան իմ արքու-
նիքս բերի, անոր վիզո շղթայ զրի, բոլոր երկիրն զան տեսաւ և հաքը զան
էրպէրա քաղաքին մէջ կախաղանէ կախեցի.

ԺԵ. Դարեհ թագաւորն կըսէ — Այս գործը Մարաստանին մէջ ըրի,
ԺԶ. Դարեհ թագաւորն կըսէ — Փարսըվա և Վերկանա (Հիրքանիա) ինձ
զէմ ապստամբեցան. Քերավարէմշէի կողմն անցան, Փարսըվաի զօքքն
ապստամբեցաւ Վէշտասպաէն, որ իմ հայրս էր. Խոքը Վէշտասպա իրեն
հնագանդ եղող զօքքով Վէսփավշտեաի, Փարսըվաի քաղաքներէն մէկին
մէջ ապստամբներուն հետ պատերազմէց. Որմիզդ անոր օգնեց. Որմիզդի
գնութեամբ Վէշտասպա ապստամբ զօքքը բոլորովին կոտրեց. Վէեախթաի
քսաներորդ օրն էր որ այս պատերազմն եղաւ. (Կառավարութիւն).

ပြန်လည်မှု

Ն. ԳՕՐԾՈՅԵԱՆ

ՀԵՂԱՎՈՐ ՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ Դ ԿԱՀԱՆԳԻՆ ԿԱՐՈՒՑ

(ՀԱՐԱՐԱՏ, ՊՈՒՆԻԿ)

Կարուղիկոսարան Արքինայի. Տարօնեցւոյն վերոյգրեալ հատուածն և Մատթէոսի ուրիշ մի հատուածն *) զոր Վահան Կաթողիկոսի ընտրութեան մասին կը միշտ կը հաւաստեն մեզ, թէ ժ. դարու սկիզբներում կամ գոնէ կեսումն Հայոց Կաթուղիկոսարանը փոխազրուած էր յՆրգինայ, որոյ մասին մինչև մեր օրերն պատմական գրուածքներու մէջ շատերն Զամշեան պատմութեանն հետևելով կը սիսալին. զոր օրինակ Սալլանթեանն իւր համառօտ պատմութեան ցուցակին մէջ այսպէս կը ուիշէ:

Աթոռն Կաթողիկոսական (յամին 924) փոխադրի ի Դունայ ի Վասպուրական, ուր և մնայ զամս 70. այսինքն ցամ 994. Բայց մենք վերց գրեալ պատմական հատուածներով կը տեսնեմք որ Կաթուղիկոսարանն յԱրգինայ փոխադրուած էր արգեն գոնէ Անանիա Կաթուղիկոսի վերջին օրերում, որոյ մաշն ու թաղումն այն տեղ կը ցուցնէ Տարօնեցին, և Վահանայ ընտրութիւնն ու յաջորդութիւնն այնտեղ լինել կը հաստատէ Ուռհայեցին, իսկ Սալլանթեան ինքն իսկ Անանիայի Կաթուղիկոսութիւնը կը գնէ 943—963 թուականներն։ Ապա ուրեմն սիսալ կը լինի այն յօգաւածն որ կատ թէ 924-ին փոխադրեցաւ աթոռն ի Վասպուրական։ և

⁽⁴⁾ ո Արդ ի յայսմ ամի (ՆԻՇ) նատաւ յաթոռ հայրապետութեան Հայոց տէր վահանի մեծեն Արդինայ, հրամանաւ Անտոնիոյի, Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց թագաւորան և Մատթեա կը

այս բնչպէս կերեկի կը հետեցնեն Զամշեան և ուրիշներն Յովհաննէս պատմաբան Կաթուղիկոսի ի Աւատուրական անցնելէն, կամ Անանիայի Վարագայ վանահայրն լինելէն: Այս սխալն ուղղած կը համարեմք: Յովհաննէս պատմաբան Կաթուղիկոսի թափառականութենէն սկսած մինչև Պետրոս Ա. Կաթուղիկոսն ի Շիրակ այսինքն Արգինայ գիւղաքաղաքը փոխադրուած համարելով Հայոց Կաթուղիկոսաբանն: Որովհետեւ Յովհաննէս Զ. Կաթուղիկոսն իր պատմութեան մէջ կաւանդէ թէ Հայոց 332 թուին¹) (883) ինքն աստանդական կը թափառէր երբեմն յԱյրից վանքն, երբեմն ի Սեան, երբեմն ի Քիրաբական, և վերջապէս ի Շիրակ ի Քաղաքան արքունի պալատն կապաւինէր: Եւ Կաթուղիկոսունք յաջորդեցին իրարու Արգինայում: մինչև Քաղաքատունեաց իշխանութեան անկումն, որ ժամանակ Պետրոս Ա. փոխադրեց աթոռն յունական բռնութենէն ստիպեալ ի Ծամնդաւ: և քանի մի տարի ետքն անցաւ ի Սերաստիա ուր վախճանեցաւ իսկ:

Ախուրեան զետէ Հայոց պատմիչներու դրուածքին նայելով: Ախուրեան զետն Անի և Քաղաքան քաղաքներէն անցնելով կը խառնուի Երասխին: այս գետն Արփայ - ըայ կը կոչուի Տաճկաց տիրապետութենէն ի վեր: Այս զետն Մեծ Շիրակ կոչուած (այժմ Շորեկկէ) գիւղին մօտ Փիրվոլի և Աղուզում գիւղերու սահմաններու մէջն երկուքի կը բաժնուի: որոց արևմտեան կողմինն, որոյ զլուխն Կարսէն սկսած կը գայ միշտ Շիրակայ և Զարիշատ գաւառներն իրարմէ բաժնելով, և այժմ Կարս - Առաջի կը կոչուի ի հարկէ տաճկաց տիրապետութենէն սկսած: և այսպէս կը կոչուի այն պատճառաւ, ըստ որում Կարս քաղաքէն կանցնի միջնաբերդը շրջապատելով (արևմտեան և Հիւսիսային կողմերէն): Խոկ արևելեան կողմինն միևնոյն Երասխին խառնուած բերանին անունով Արփայ - ըայ կը կոչուի մինչև ցայսօր տեղացիներէն²): որոյ զլուխն կոկսի Զըլուըրի լճէն և կը գայ կանցնի Աղէքսանդրապոլի բերդի տակէն: զոր այժմու Հայերէն ոմանք իրենց զրուածոց մէջ Ախուրեան կանուաննէն³) և ոմանք Գարեգետ⁴) բայց Տարօնեցւոյն դրուածքին նայելով, բուն Ախուրեան զետն է: Կարս քաղաքէն անցնողն և

1 Յովհաննէս Կաթուղիկոսի: Տարօնեցւոյն եւ Աւոհայեցւոյն դրած թուականներն իրարմէ կը զանազանին 3-10 տարիներով: որոց ընտգիրները քաղդատելու միջոցն այսօք կը պակասի մեզ:

2 Գետերու բերանն ինչոր կոչուի, այնպէս կը կոչուի ամենահեռանւոր դլուին այն դետոյն: Արփայ - ըայ կոչուած գետոյն աւելի երկայն ձիգ եւ մհծ մասն Կարս քաղաքէն անցնողն է: բայց այժմ Արփայ - ըայ կը կոչուի Աղէքսանդրապոլի մօտէն անցնող ձիւղն: որ դարձեալ Շիրակ գիւղի մօտ Ախուրեանին կը խառնուի: Եւ այս սխալ անուանումն ինչպէս կերեւի 1828 պատերազմէն վերջն Առևտուած եւ Օսմանցւոց մէջ պատահած սահմանաց որոշուած ժամանակն այսպէս կոչուած է այս մասն, որ բուն սահմանագիծն էր մինչեւ այս վերջին 1877 թուի պատերազմը:

3 Զիրնալ որոշել բուն Ախուրեանն:

4 Այժմու Արփայ - ըայ անուան իբրեւ թարգմանութիւն կը գործածեն ի հարկէ: բայց Ախուրեան դետին Արփայ - Զայ կոչումն արաբական բառ երով կսուրբաբանի:

միւս Շիրակայ գետերն նորա օժանդակներն են. բայց որում Տարօնեցին կը զրէ թէ Արգինայ գիւղաքաղաքն Ախուրեան գետի եղերքումն է շինուած. և այս Արգինայն իրօք Կարսէն եկող ջրոյն եղերքումն է, և ոչ Աղէքսանդրապոլի մօտէն անցնող ձիւղի եղերքումն:

Ախուրեան գետի մի յատկուրիմը. Ախուրեան գետն որշափ տեղ որ կը պտտի Շիրակայ դաշտին մէջ, իւր ընթացքն ամրող քարաժայուերու մէջ է. այնպէս որ տեսնողներն շատ անգամ կը կարծեն թէ յատուկ մարդկային ձեռքեր փորած են այն ժայռերն ու գետոյն անփոփոխ սահման մի տուել, Մանաւանդ Կարս քաղաքին մէջի ընթացքն ու միջնաբերդին բարձրաւանդակի երկայնութեամբ սարին միջէն ուղիղ գծով ժայռն կորել անցնելն բոլորովին մարդկային մտաց հնարք կարելի է համարել. այնպէս է և Զարիշատի սահմանէն անցած տեղն, և Փալտրուանի ետևն, և Պաղլարի սահմաններէն սկսած մինչև Հոռոմոսի վանքի թերակղզեակի շրջապատելն, ու Անի քաղաքի երկու կողմեն և բերդի երեք կողմերն արած պտղութը մինչ ի Բագարան, այնպիսի հաւասար լախութեամբ իջեցուցած է իւր ընթացքը ժայռի մէջ, որ եթէ մարդկի յատուկ բանային այն ճանապարհն, այնչափ միայն պիտի կատարէին. Երդարև կան ուրիշ գետեր որ քարաժայուերը մաշելով իրենց ճանապարհ յօրինած են և կը գնան, բայց նոքա լեռներու մէջ միայն այս զիրքն ունին. և դաշտերու մէջ շատ անգամ հասարակաց մշակած արտերը կը քանդեն կը տանին. ինչպէս Երասիս Բասենի սարերուն մէջ ժայռերէն կանցնի, իսկ դաշտավայր տեղերում մինչև երկու վերստաշափ լայն տարածութիւններ ունի քարերով ու խճերով ծածկած, և միշտ մշակութեան արտերն քանդած:

Ախուրեանի այս մասնաւոր յատկութիւնն Շիրակայ դաշտին մէջ, մի խորհուրդ կը ծագեցնէ մեղ. Թէ Շիրակայ հողն արգաւանդ էր ի հնուց և բազմարեր, այս յայտնի է մեզ Մարիբասայ վիպագրութենէն. նոյնպէս և Շարայ այս դաշտին տէրն կարի շատակեր, ի հարկէ սորա սերունդն ևս նոյն շատակերութիւնն իրրև հայրենի յատկութիւն անընդհատ ունեցան իրենց աճելութեանն հետ. և այս սերնդեան աճելուն բաւական պիտի չգար Շիրակայ բազմարերութիւնն. վասնորոյ և Շիրակայ նախնիքն ամենայն ինսամով զգուշացել են որ իրենց կերակրով հողոյն և ոչ մի փոքր մասն չկորսնցնեն. նոյնպէս ուշագրութիւն զարձուցած են որ կարելի եղածին շափ աշխատին և աւելի արդիւնք վերցնեն իրենց համբաւաւոր ամրարներն լեցնելու. Շիրակայ նախնի նահապետաց կամ Շարայի սերնդեան տանու-

Արպա՝ աչսոյ, այսինքն յորս զետեր. եւ արդարեւ Շիրակայ դաշտին մէջ չորս գետակներ կը միանան իրարու եւ Արքայ—Զայն այն է Ախուրեանը կը կազմեն, որ Երտսիսին կը խառնուի. Չըլդըրի եւ Շիրակայ բնակիչներէն ոմանք. եւս աւանդութեամբ կտսեն թէ այս գետն երբեմն գարիտվ իթը քաղած լինելուն կը կոչուի Արքայ—Զայ, այսինքն Գարիի գետ. բայց այս տանդութիւնն յարմարցուցած կերեւի աւելի քան թէ չըլմարիտ:

տերանց այս մասնաւոր ուշադրութիւնը կերպի Ախուրեանի լնթացքին վերայ բոլորովին Շիրակայ զաշտում։ և այս ուշադրութիւնն եղած է, որ գետը միշտ քարաժայուերու վերայէն անցնեն, և ոչ մշակելի հողերէն, որպէս զի չպակասի իրենց արտերն, կամ աւելնայ որչափ որ հնարաւոր է։ Նախնեաց այս ուշադրութիւնը որ միշտ առաջքն առել է գետոյն, և չէ թողել բնաւ որ անցնի օերմանելի երկրէն, հազարաւոր տարիներէ ետքն այնպիսի ընթացք տուած է գետոյն, որ այլ ևս չէ կարող դիպուածով իմ արտեր քանդել, և դաշտն աւերել։ Այս մի և նոյն ուշադրութիւնն ունենալ հարկաւոր է և այժմ այն երկրագործ տանուտերանց, որոց արտերն ընդհանրապէս գետեզերքում կը գտնուին։ Աշխատասէր ժողովրդոց աշխատութիւնն կերպի և երկրի ճանապարհներէն, գետերէն և ջրանցքներէն։ Հայ երկրագործներն կաշխատին տեղ տեղ նոր առուներ հանել գետերէն, որպէս զի մշակեն անջրդի և խոպան երկիրներ։ բայց միենոյն ժամանակ առանց ուշադրութեան թողուած են գետեզերքներում և գետափներում*) գտնուած արտերն, որք երբեմն գետոց հոսանքին զոհուելով կը գան գետի բերաններում կղզիներ ձեւացնելու, կամ բոլորովին ծովուն յատակն մաղուելու, իրենց հետ տանելով և շատ երկրագործաց քըրտինքն ու աշխատանքն նոյնպէս և շատ անգամ յորդ հեղեղներն կը ծածկեն գետեզերքում գտնուած արտերն, իմերով և աւազակցյաներով։ այնպէս որ մանգաղն արտը կերթայ, և հնձոց տեղն աւազի տեղերուն և շեղջերուն կը պատահի։

Գետերու պատճառած այս վեան աւելի երկրագործաց անհոգութենէն յառաջ կը գայ, քան թէ Աստուծմէ, ինչպէս կը կարծեն ռամիկ իմաստուններն, ըստ որում գետերն աւելի օգտակար են քան թէ վեանակար, բայց միայն գիտուն և աշխատասէր բնակչաց համար, իսկ ուր որ բնակիչք անհոգ են և տգիտացած, այնտեղ միշտ վեասակար եղած են գետերն։ և ոչ միայն գետերն վեասական կլինին, այլև այզիներն, իսկ եմէ անհոգութեան պատահին, փշարեր և խոպան կը լինին. վասն զի որչափ որ բնութեան օրէնքն է որ երկիրն ինքն իրեն պտղաբերէ, այնչափ ևս արդարութեան պահանջքն է, որ քրտունքն ու աշխատութիւնն միայն պիտի վայելն երկրի պտուղներն։ Ուրեմն հարկաւոր է այս տեսակ վեասոց առաջքն առնել։ և որովհետեւ մեր գիւղական երկրագործաց մէջ աւելի բազմաժամանակեայ են այս տեսակ անհոգութիւններն, հետեւաբար իրենք ինքնին շեն կարող այդ չարեաց առաջքն առնել։ այստեղ կը նշանակեմք մի ամենազիւրին կերպ։ Որպէս զի գետն իր ափերը չիլցնէ, հարկաւոր է այն ափանց վերայ վայրենի ծառեր տնկել **), որոց արմատներն իրարու հիւտուելով փլւելէ ազատ

* Գետարգերը կտսուին այն երկու կողմերն գետոյն որ ջրէն շատ բարձր չեն. իսկ գետափի կտսուին այն կողմերն որ ջրէն շատ բարձր են. գետը միշտ կլնտուէ գետեցրէներուն քար եւ խիճ լցնելով. իսկ գետափին կը վնտուէ վլցնելով եւ տանելով.

** Ամեն տեսակ անտառային ծառեր կը յարմարին այս պարագային, իսկ աւելի գիշերին է ոււենիք ձգել, որը թէ շոււս կանեն եւ թէ շատ խորացմատ կը հաստատեն»

կը պահեն։ Այսպէս և գետեղերքներում ջրին անմիջապէս եղերքներն խռով քարեր ձգելու է։ և քիչ մի ներսէն դարձեալ շարքով ծառեր տնկելու է, մանաւանդ ուռենիներ, որոց բուներն առհասարակ ճիւղերով լիք կը լինին, և գետոյն բերած աւազներուն մէջ հետզիետէ արմատանալով պատռար մի կը դառնան ջրոց յորդութեանն առջեւ։ այնպէս որ հետղիւտէ գետն իր ընթացքն միւնոյն տեղում ունենալով կը խորանայ, և այլ ևս արտերն չծածկեր։

Այս հոգացողութիւնն հարկաւոր է մանաւանդ Արարատայ բնակիչներուն, ուր տեղ գետերն ընդհանրապէս գաշտի մեծ մասն ծածկած են խճերով և աւազակոյտներով։ որոց երեսն հազիւ թէ մանանեին և ուրիշ մանր սերմեր կը կանաչին։ և այս տեղերն այժմու բնակչաց աշքին իրրեւ անպիտան անտես մնացած են և խռած կանուանեն, և խիստ սակաւ ոմանք աւելի թունդ զինի խմելու բաղձանօք այսպիսի տեղերում այդի տնկել կը ձգտին, եթզիւրութեամբ ջուր վերցնելու մի ճանապարհ գտնեն։

Անհոգ գիւղականներէն ոմանք կը պատճառեն թէ Արարատայ գաշտումըն Երասխայ ընթացքն անփոխուս զրութեան մէջ ձգել չէ կարելի և եթէ կարելի լինէր, նախնի զարերումն ևս Արմաւրայ արքունիքն առաջքն առած կը լինէին, և քաղաքը չէր ամսայնայր։ Արգարե Արմաւրայ շրջանակէն շատ հեռացոյց Երասխն իր ընթացքը, և այս պատճառաւոն հայոց արքունիքն փոխադրուեցաւ Երուանդայ և Սանատրկոյ որդուցն օրերով և սորա առաջքն առնել չկարողացան նախնիք, բայց մի՞թէ կարծելու ենք, որ այն փոփոխութիւնն ևս ինչպէս մեր օրերումն այսպէս միայն անհօգութեան երեսէն լինէր։ ոչ ։ այլ այն ժամանակ թերեւս երկրաշարժէն փուլ եկած լիուներ կամ քարավիներ ծածկեցին Երասխայ Ճանապարհն, և այնպէս յանկարծ փոխեց իւր տեղն, ինչպէս կերեի և Երասխաձորի փլատակներէն, որոց շատ բարձրերէն կանցնի եղեր Երասխ, և փլցնելով տարած է այն մեծատարած քանակութեամբ երկրին հողերն ու քարերն Արարատայ այժմու բնակչաց անհօգութեան պատճառն ուրիշ բան չէ, բայց միայն իրենց բաւականասիրութիւնը, որով և ամեն տեսակ վայել-չութենէ զուրկ մնացած են մինչև ցայսօր, և այս զրկանաց մէջ կը շարունակեն տակաւին իրենց կենցաղն։ Բայց այս բաւականասիրութիւնն օտար է բոլորսին այն բաւականասիրութիւնն որ մարդկային կենցաղավարութեան մէջ առաքինութիւն համարուած է։ իսկ Արարատայ բնակիչ հայոց բաւականասիրութիւնն այն միայն է, որ առ այժմ իրենց ձեռին գտնուած արտօրէից բերքն իրրեւ հաց կը բաւականանայ մի տարի, և այս պատճառաւոն է որ իւրաքանչիւր երկրագործ իւր տան բաւականութեան շափով միայն կը սերմանէ, չնայելով որ միջոց ունի ինքն այլ ևս սերմաննելու, և ամբարելու, մինչդեռ խիստ շատերն միայն հաց ունին իրրեւ կերակուր և ոչ այլ ինչ։ սորա պատճառն երբ կհետեւնք վնասուելու, խիստ շատերուն արտերուն նուազութիւնը կը գտնեմք. և այս ի՞նչ պատճառաւ, եթէ ոչ

գետերու լնմացքին վերայ բնաւ ուշաղրութիւն դարձուցած չլինենուն պատճառաւ¹⁾:

Առաջատայ նահանգումն եղած գետերն, մանաւանդ Վաղարշապատայ սահմանակից գաւառներում՝ եղածներն այժմ զրեթէ ամենքն էլ յայտնի են: Թէ նախնեաց պատմութեանց մէջ ինչպէս կանուանէին, և այժմ ի՞նչ: Հայ պատմէաց յիշածներէն մինչև այսօր անորոշ մացած է միայն Ռահի գետն, զօր կը յիշէ Կորիւն Ս. Մեսրովայ պատմութեան էմիջ²⁾: Վաղարշապատայ սահմաններումն նշանակելով: Այժմու զրադէտներէն ունանք Ռահի գետն կը համարին Աղեքսանդրապոլի մօտէն անցնող Ախուրեանի մէծ օժանդակն որ Արփայ շայ կանուանի 1828էն ի վեր: մեզ յայտնի չէ թէ ինչ ապացոյցով կը հաստատեն իրենց ասածն: բայց Կորիւնի զրածին նայելով դժուար կը լինի ապացուցանել թէ այն Ռահի գետն լինի: ըստ որում Կորիւն այնչափ կը մօտեցնէ Վաղարշապատայ: որ միենոյն օրումն քաղաքէն ենելով Ռահի գետի ափումն կը պատահեն Մեսրովայ և զիրար ողջունել ետքն երգերով և որ հնութեամբ կը դառնան ի Վաղարշապատ: Այս հանգամանքին բնաւ չյարմարեր Աղեքսանդրապոլի գետն³⁾ ըստ որում շատ հետի է Վաղարշապատէն: և կարելի չէ որ թագաւորն և եպիսկոպոսն ու աւագանին միենոյն օրում Վաղարշապատէն մինչև այնտեղ կարողանան հասնել: Այլ մեզ աւելի յարմար

1 Այս մասին վերայ շատ երկար հարկաւոր է գրել մինչեւ զարթնու Հայ-երկրագործաց միտքը: սակայն այժմ մենք բաւական կը համարինք այսչափը մեր ճանապարհորդութենէն քլորովին չեռանալու համար: Կըյուսանիք թէ այսչափ միջանկեալին ներոգամտութեամբ կըդիտին այն լնթերցողներն, որք միտյն ճանապարհորդութեան հետաքրքիր են առաւել, ըստ որում մեր ազգին խիստ մեծագոյն հասարակութիւնն աւելի պէտք ունի այս մասին վերայ լեելու եւ կարդալու: թէպէտ մեր պարբերական թերթերն գրեթէ միշտ զանց արտծ են գրել եւ սորպելու վասն զի մեր ազգին մէջ աճելով յաւառ գնացող տուներն գրեթէ միշտ ոոլած կը մնան եւ յետին թշուաւութեան հասնելով կախին պակասել: այս չարեաց առաջքն առնենու համար ոչ մի դիւդի մէջ չեր հանդիսար մարդու, որ փոքր ի շատէ խելահաս լինի եւ իւր խօսքով կամ գոնէ օրինակովն մի ճանապարհ բանայ աղքատներուն ապրելու: Այս մասին ուրիշ առանձին յօդուածներով եւս կը խօսեմք երկրագործ հասարակութեան հետղհետէ:

2 « Զօթեւանօք անցեալ աջողութեամբ եւ հոգելից ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն: ի կողմանս Արարատեան գաւառին: առ սահմանօք նոր քաղաքին Վաղարշապատայ ի վեցերորդ ամի Վաղարշապէյ արքային Հայոց մեծաց ..

» Եւ արդ եկեալ յիշելին մերձ ի թագաւորական քաղաքն Վաղարշապատ, աղղլինէր թագաւորին եւ սրբոյ եպիսկոպոսին: Որոց աւելաւ դամենայն նոխարարագունդ աւատդանայն ամելու, ի քաղաքէն ելեալ պատահէին երանելոյն զափամբ Ռահի գետայն էւ զցանկալի ողջոյնն միմեանց տուեալ: ուստի եւ բարբառօք ցնծութիւն եւ երգօք հոգեւազօք եւ բարձրագոյն օրհնութեամբք ի քաղաքն դառնային, եւ զաւուրս տօնական ուրախութեամբ անցուցանէին:

3 Թէպէտ Աղեքսանդրապոլի գետն եւս յայտնի չէ, թէ նախնի ժումանակիներում ինչ անուն ունէր:

կերևի Միհրիվանայ ձորն *) անուանել Ռաչ գետ, որ Վաղարշապատէն Յ—կ ժամու չեռաւորութիւն միայն ունի, և Վաղարշապատայ սահման-ներում եղածներէն միայն այս գետին հին անունն յայտնի չէ. մնացած-ներն յայտնի են Քասաղ, Մեծամօր, Մօր, Ազատ, Հրազդան, որք ամենքն էլ երախսայ օժանդակներն են և Վաղարշապատայ սահմաններումն կը խառնուին:

Հոկտ. 23ին առաւօտուն կանուխի Խըզըլ — Զախախիւն ճանապարհ ել-նելով կէս օրէն վերջն Յ ժամուն հասանք ի Կարս Հայոց առաջնորդարանն, ուր հետզհետէ լսեցինք բերդին ոմբակոծութեան ժամանակին քաղաքացւոց կրած տաղնապն, աղքատաց անցուցած վտանգը, քաղաքացւոց մա-նաւանդ Հայոց գործն ու ապրուստն և ուսումնաբանաց վիճակը Կարսե-ցւոց գործն ու ապրուստն աւելի ճշգութեամբ ներկայացուցած լինելու հա-մար, այստեղ կը նշանակեմք գաւառին ամեն տեսակ բերքերն:

Բերք Շիրակայ — Կարուց գաւառին. Բովանդակ Շիրակայ գաւառին պտղա-բերութիւնն ու արգաւանդութիւնն արդէն կը գովուի Հայոց հնագարեան պատմութիւններէն սկսած մինչեւ մեր օրերն. նշյն գովեստին արժանի է բոլորովին և այժմ Կարուց գաւառի ընդարձակ դաշտավայրն ու զանազան մանր հովիտներ, որք առատօրէն կը պտղաբերեն հետեւեալ բերքերն. Ցո-րեան, գարի, կտաւահատ, կանեփ, լուրիա, պիպէու (կանաչ) կաղամբ, վարունգ, շողգամ, ստեղղին, ճակնղեղ, բողկ, սոփի, սխտոր և գետնա-խնձոր:

Այս բերքերն առատութեամբ պտղաբերող հողն ի հարկէ ուրիշ սոցա-նման շատ բերքեր **) և արտազրելու յարմարութիւնն ունի. բայց ան-կարելի է ճարել Կարուց գաւառումն. և այս ոչ ուրիշ պատճառաւ, այլ միայն տեղացւոց դանդաղութեան պատճառաւ, կամ թէ անշուք գեղացւոց անդիտութեան պատճառաւ. Այս գիւղացիներն առհասարակ այն գծծա-կեաց մարդկանց կարգէն են, որ և ոչ կը խորհին երբէք, թէ ասենք իրեւ-երկրագործ մարդիկ, կարող են իրենց ամեն տեսակ ուտելիքներն իրենց ար-տերէն քաղել. և այն աստիճան պաշարեալ են, որ կարծես իրենք միայն գարի և ցորեան մշակելու դատապարտեալ են. Գեղացւոց այս մեղկութիւնն արիութեան փոխարկելու ամենէն առաջին միջոցն որ քաղաքացւոց հետա-քրքրութիւնն ու լիութեան ցանկութիւնն պիտի լինի, այն ևս կպակասի այս թշուառներուն. որովհետեւ քաղաքի ընակչաց խիստ մեծադղյն մասն

*) Այս ձորն արդէն նմանութիւն մի ունի Քասաղ գետին. նորա նման խորտիոր քարափայուերէ անցնելով այսպէս անանուն կմնայ եւ թալիչէն անցնող Ճորակը, զոր Արուճու գետ կանուանեն ոմանք նոյն իուկ թալիչի անունէն առնվազ.

**) Սոցա նման շատ բերքերէն զատ այս հողումն յառաջ կդան և ամեն պտղա-տու ծառք. որք կալղաբերէն առհասարակ բարեխառն գօտիներում. բայց բալոր գա-ւառին մէջ չերեւիր եւ ոչ մի ծառ. այնպէս որ այս երկրի տղոյքն առաջին անդամ այն ժամանակ պիտի ունենան ծառի գաղափարն. երբ Սոանլը անտառն երթան փայտ բերելու.

կազմող տաճիկներն իրենց հետ Ասորեստանէն բերած շոայլութեան և ծուլութեան ամեն հետեւանդներն արդէն իսկ արմատացուցած են երկրին մէջ, որոց օրինակին զոհ գնացած է և Հայոց վայելչութիւնն որ պիտի ունենային, եթէ իրենց հայրենի սովորութիւններն կորուսած չլինէին:

(Կշարա-նախիլ):

կ. վ. Ա.

ԹԵԽՈՒՈՐ ԶՈՒԿԻ ՄԵ.

Չուկ մի թոշող թեաւոր

Դըժգոհ իւր բաղդէն

Դարձաւ կասէր իւր ծեր մօր

— « Զգիտեմ ինչ անեմ »

Ոչ թէ արգեօք ինչպէս պէտք

Որ ազատվիմ մահուանէ .

Երբոր թոշիմ օղի մէջ »

Վախս է սաստիկ և անվերջ,

Մեր ծովային արծիւներէն,

Կոցա աչեղ մագիլներէն:

Իսկ երր մըտնեմ ծովին խոր

Ըանաձկներն ահաւոր

Մահ կսպառնան անդադար,

Մէկ տեղ հանգիստ շեմ գըտնար » .

« Ծերուկ մայրը » որդեսակ »

Աշխարհում կան փորձանք անբաւ,

Եթէ կամիս լինել հանգիստ,

Ըստրիր ճանապարհ փոքրիկ »

Եւ նորա մէջ առաջ գընա »

Որով կլինիս երջանիկ »

Ոչ օղին մէջ բարձրացիր

Եւ ոչ ծովին խոր մըտիր » . . .

ԱՌԱՔԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ՎԵՐԱԿԻՉ ՀԻՒՄՆԴՈՒԹԻՒՆԵՐ.

Ա. արակիւ հայուական հիւանդան-նիւներ:

(Ալլարատ Հ. 6.)

Ճարունակենք վարակիչ կպչողական հիւանդութիւնների տարածման և ծագման մասնաւորութիւնները պատմել: